ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՓԵՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն պրոֆեսոր Արփենիկ Մարկոսյանցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դ. Դեմիրճյան փողոց հ. 38 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՓԵՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պրոֆեսոր Արփենիկ Մարկոսյանցը ծնվել է 1930թ. փետրվարի 2-ին Խարկով քաղաքում: Ավարտել է Խարկովի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Խարկովի պետական համալսարանում, 1960-ական թվականներին տեղափոխվել է Երևան և աշխատել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսերեն լեզվի ամբիոնում:

1962թ. տեղափոխվել է Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական ռուսերենի և օտար լեզուների ինստիտուտ՝ որպես ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս, այնուհետև՝ 15 տարի աշխատել է որպես այդ ամբիոնի վարիչ: Նա հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների:

1984-1995թթ. նա եղել է Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական ռուսերենի և օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի ֆակուլտետի դեկանը:

1985թ. ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Արփենիկ Մարկոսյանցին շնորհվել է ՀՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի, 1991թ.՝ ԽՍՀՄ Ազգային կրթության պետական կոմիտեի որոշմամբ պրոֆեսորի գիտական կոչումներ:

Արփենիկ Մարկոսյանցը մահացել է 2006թ. մարտի 21-ին:

Պրոֆեսոր Արփենիկ Մարկոսյանցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դ.Դեմիրճյան փողոց հ.38 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Գ. Գասպարյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՓԵՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արփենիկ Մարկոսյանցի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՓԵՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արփենիկ Մարկոսյանցի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ